



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 1009-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ Ռ.ԶԱԽԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀԱԿ ՀՐԱՆԴԻ
ԴԱՎՈՅԱՆԻ, ՀՐԱՆԴ ՍԱՀԱԿԻ ԴԱՎՈՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ՌԱՖԻԿԻ ԽՈՒՆՈՅԱՆԻ,
ՄՇԵՐ ԱԲՐԱՀԱՄԻ ԴԱՎՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 22.04.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 25.06.2026թ./ գույքի նկատմամբ ժառանգ ք. Գավառ Ռ. Զախարյան փողոց թիվ 26 հասցեի համասեփականատեր Սահակ Հրանդի Դավոյանի /ծնված 02.01.1964թ-ին/ դիմումը, «Հայր և Որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն, որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Ռ. Զախարյան փողոց թիվ 26 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.34 հա, ինչը փաստացի կազմում է 0.27952 հա, որը Սահակ Հրանդի Դավոյանի /ծնված 02.01.1964թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 505.21 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1962-1980թթ./ կառուցման ու սպասարկման համար

անհրաժեշտ 0.27952 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի ք. Գավառ Ռ. Զախարյան փողոց թիվ 26 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սահակ Հրանդի Դավոյանի /ծնված 02.01.1964թ-ին/, Հրանդ Սահակի Դավոյանի /ծնված 13.12.1990թ-ին/, Նարինե Ռաֆիկի Խունյանի /ծնված 11.03.1971թ-ին/, Մհեր Աբրահամի Դավոյանի /ծնված 07.09.1995թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.27952 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 505.21 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1962-1980թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ռ. Զախարյան փողոց թիվ 26 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2026թ. հուլիսի 21

ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 1010-Ա

ՍՆՈՒՆԴԻ ՓԱԹԵԹ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովի առ 17.07.2026 թ.,

Գավառի համայնքապետարանի 2026 թ. բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի այլ սոցիալական ծրագրեր գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ դրամական արժողությամբ սնունդի փաթեթ

1.Գրիգորյան Օնիկ Սուրենի դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ
2.Մանուչարյան Անահիտ Սուրենի դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ
3.Հովհաննիսյան Արմինե Արթուրի դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ
4.Հարությունյան Պատվելի Բենյամինի դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ
5.Մանուկյան Օֆիկ Վահագնի դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ
6.Տերգիկյան Քաղցրիկ Կամոյի դրամ	19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ

- | | |
|---|---|
| 7. Մոսեստվա Ժաննա Վարազդատի
դրամ | 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ |
| 8. Գարգրցյան Արմինե Վասիլի
դրամ | 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ |
| 9. Ղազարյան Ալվարդ Կարոյի
ՀՀ դրամ | 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / |
| 10. Սարկիսովա Ժաննա Պարույրի
դրամ | 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ |
| 11. Հոխոյան Ալվարդ Հարութի
դրամ | 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ |
| 12. Հովհաննիսյան Կարինե Զավենի
ՀՀ դրամ | 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / |
| 13. Սաֆարյան Արտուշ Հակոբի
դրամ | 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ |

259 740 /երկու հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր քառասուն / ՀՀ
դրամ փոխանցել «Սառնա» ՍՊ ընկերությանը թվով 13 շահառուներին սնունդի
փաթեթները մատակարարելու նպատակով:

Ընդամենը՝ 259 740 /երկու հարյուր հիսունինը հազար յոթ հարյուր քառասուն / ՀՀ դրամ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 1011-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՓՈՂՈՑ 10-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ ԹԻՎ 17 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՆՎԵԼ ՎՈԼՈՂՅԱԾԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ԼՈՒՍԻՆԵ
ՄԱՆՎԵԼԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ, ԱՍՏԴԻԿ ՌԱՖԻԿԻ ՍՄԲԱՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 17.06.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 27.04.1991թ. թիվ 8 որոշումից քաղվածքը, ք. Գավառ Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 10-րդ նրբանցք թիվ 17 հասցեի համասեփականատեր Մանվել Վոլոդյայի Սիմոնյանի /ծնված 06.10.1963թ-ին/ դիմումը, «Հայր և Որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, համաձայն, որոնց Գավառ համայնքի ք. Գավառ Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 10-րդ նրբանցք թիվ 17 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.04 հա, ինչը փաստացի կազմում է 0.06875 հա, որը Մանվել Վոլոդյայի Սիմոնյանին /ծնված 06.10.1963թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 198.50 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1972-1975թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.06875

հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնքի ք. Գավառ Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց 10-րդ նրբանցք թիվ 17 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մանվել Վուրդյայի Սիմոնյանի /ծնված 06.10.1963թ-ին/, Լուսինե Մանվելի Սիմոնյանի /ծնված 23.01.1991թ-ին/, Աստղիկ Ռաֆիկի Սմբատյանի /ծնված 22.09.1972թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.04 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.02875 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.06875 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 198.50 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1972-1975թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Արծվաքար թաղամաս Գ. Միքայելյան փողոց 10-րդ նրբանցք թիվ 17 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. հուլիսի 21
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 1012-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔ ԿԱՔԵԼԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ 58/6 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. "Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին», թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով սեփականության իրավունքի թիվ 2023076 վկայականը, Գավառ քաղաքի՝ Կաբելագործների փողոց թիվ 58 բազմաբնակարան բնակելի շենքի սեփականատերերի գրավոր համաձայնությունը, Գավառ քաղաք Կաբելագործների փողոց 58/6 հասցեի սեփականատեր Ռուբեն Միշայի Չքոլյանի /ծնված 24.06.1954թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք

1. Գավառ քաղաքի Կաբելագործների փողոց 58/6 հասցեում ինքնակամ կատարված փոփոխությունները՝ 1 /մեկ/ քառակուսի մետրի համար 362.7 /երեք հարյուր վաթսուներկու ամբողջ յոթ տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը $35.6 \times 362.7 = 13000$ /տասներեք հազար/ ՀՀ դրամ և ինքնակամ բացված դուռը՝ 1 /մեկ/ դռան համար 1209

/մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, ընդամենը $1 \times 1209 = 1300$ /մեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:

2. Անշարժ գույքի ք. Գավառ, Կաթելագործների 58/6 հասցեն վերահասցեավորել և տրամադրել Գավառ քաղաք, Կաթելագործների փողոց, 10-րդ շենք, բնակարան 7 հասցեն:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Շենք շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. հուլիսի 21
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 1013-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Ի. ԱՎԴԱԼՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ՀԱՍՑԵՈՒՄ
ԼՅՈՒԴՎԻԳ ԳՐԻՇԱՅԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ՍԻՐԱՆՈՒՇ ԼՅՈՒԴՎԻԳԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԵՎ
ՄԱՐԻԱՄ ԼՅՈՒԴՎԻԳԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ
ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը և Գավառ համայնք գյուղ Սարուխան Ի. Ավդալյան փողոց 3 հասցեի համասեփականատեր Մարիամ Լյուդվիգի Դավթյանի /ծնված 04.09.1991թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի 05-078-0133-0015 կադաստրային ծածկագրի՝ Լյուդվիգ Գրիշայի Դավթյանին, Սիրանուշ Լյուդվիգի Դավթյանին և Մարիամ Լյուդվիգի Դավթյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 11062026-05-0087/ գույքի բաժանումից առաջացած 0.089 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Սարուխան, Ի. Ավդալյան փողոց, 3 հասցեն:

2. Գավառ համայնքի 05-078-0133-0015 կադաստրային ծածկագրի՝ Լյուդվիգ Գրիշայի Դավթյանին, Սիրանուշ Լյուդվիգի Դավթյանին և Մարիամ Լյուդվիգի Դավթյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 11062026-05-0087/ գույքի բաժանումից առաջացած 0.021 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Սարուխան, Ի. Ավդալյան փողոց, 1/1 հասցեն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. հուլիսի 21
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 հուլիսի 2026 թվականի N 1014-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության «ՀՀ քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության Գեղարքունիքի Մարզի Գավառ քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին 13 հուլիսի 2006թ. N 1176-Ն որոշումը, **որոշում եմ**


1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի /կադաստրային ծածկագիր 05-001-0313-0008/ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասից առանձնացնել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0,00074 հա մակերեսով հողատարածքը և տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ազատության փողոց, թիվ 29/6 հասցեն:

2. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել հասարակական կառուցապատման հողատեսքի:

3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2026թ. հուլիսի 21
ք. Գավառ


Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1015-Ա

**ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՉԱՓԱՅԱՍ ՄԵՐԻ ՄԿՐՏԻՉԻ ՇԱՅԻՆՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2/ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 4-րդ ենթակետի «գ» պարբերության դրույթներով, հիմք ընդունելով Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 22.07.2026թ. նիստի արձանագրությունը, ելնելով անչափահասների իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից, **որոշում եմ**

1. Թույլատրել Գավառ համայնքի բնակիչ Վարդուհի Խաչիկի Վարպետյանին (նույնականացման քարտ՝ N 016444051, տրված՝ 13.08.2024թ. 040-ից) տնօրինելու 2004թ. արտադրության OPEL ZAFIRA 1,6 մակնիշի 37 RU 886 համարանիշի տրանսպորտային միջոցի՝ իր անչափահաս դուստր Մերի Մկրտիչի Շաիինյանին (անձնագիր՝ AX 0423415, տրված՝ 13.08.2024թ., 040-ի կողմից) սեփականության իրավունքով պատկանող 1/4 (մեկ կոտորակ չորս) բաժնեմասը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. հուլիսի 22
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1016-Ա

**ԳԱՎԱՌ ԶԱՂԱՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՊԵՏՐՈՎԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 4
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ԽԱԶԱՏՈՒՐԻ
ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ՀԱՍՄԻԿ ՆՈՐԻԿԻ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ, ԽԱԶԻԿ ԴԱՎԻԹ
ԳԱՍՊԱՐՅԱՆԻ, ԱԲԵԼ ԴԱՎԻԹԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ ԵՎ ՇԵՆՔ-
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՎԻԹ ԽԱԶԱՏՈՒՐԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՅՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 02.04.2026թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, 24.06.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից բաղկացած, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Գ. Պետրովի 2-րդ փողոց 4 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է ընդհանուր 0.83 հա հողամաս /որից տնամերձ՝ 0.06 հա/, որը Դավիթ Խաչատուրի Գասպարյանին /ծնված 02.01.1962թ-ին/ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է, մակերեսը փաստացի կազմում է 0.12799 հա, և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 173.10 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1968թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.12799 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Գ. Պետրովի 2-րդ փողոց 4 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Դավիթ Խաչատուրի Գասպարյանի /ծնված 02.01.1962թ-ին/, Հասմիկ Նորիկի Մովսեսյանի /ծնված 03.01.1966թ-ին/, Խաչիկ Դավիթի Գասպարյանի /ծնված 14.03.1986թ-ին/, Արել Դավիթի Գասպարյանի /ծնված 05.10.1987թ-ին/ հողօգտագործման իրավունքը, ընդհանուր հողհատկացման՝ 0.83 հա մակերեսով հողամասի 20%-ի չափով՝ օրինական հատկացված 0.06 հա տնամերձ հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.06799 հա մակերեսով հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.12799 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Գ. Պետրովի 2-րդ փողոց 4 հասցեում գտնվող շինությունների նկատմամբ Դավիթ Խաչատուրի Գասպարյանի /ծնված 02.01.1962թ-ին/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական կառուցված 173.10 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1968թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:


3. 2025թ-ին ինքնակամ կառուցված 46.7 քմ մակերեսով ավտոտնակը և 0.4 քմ մակերեսով պարիսպը ճանաչել որպես ինքնակամ շինություններ:

4. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Գ. Պետրովի 2-րդ փողոց, 4 հասցեն:

5. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1017-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԸ ԳՅՈՒՂ ԾՈՎԱԶԱՐԴ ՉՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՓՈՂՈՑ 49
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՍՏԵՓԱՆ ՄԵԽԱԿԻ ԽՆԿՈՅԱՆԻ, ՄԱՆՈՒԾ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԳԱՄՊԱՐՅԱՆԻ,
ԱՐԵՎ ՍՏԵՓԱՆԻ ԽՆԿՈՅԱՆԻ, ՆԱԹԵԼԼԱ ՍՏԵՓԱՆԻ ԽՆԿՈՅԱՆԻ, ԱՆԻ
ՍՏԵՓԱՆԻ ԽՆԿՈՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ,
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի պահանջներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 15.04.2026թ. տրված Ծովազարդ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 02.05.1991թ. թիվ 9 որոշումից քաղվածքը, որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 30.04.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 20262TVVFC ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ համայնք գյուղ Ծովազարդ Չորավար Անդրանիկի փողոց 49 հասցեում գտնվող ընդհանուր հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.11 հա, ինչը փաստացի կազմում է 0.10998 հա, որը Ստեփան Մեխակի խնկոյանին /ծնված 01.01.1959թ-ին/ ընդհանուր համատեղ

սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 360.7 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1991-2020թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.10998 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Շովազարդ Չորավար Անդրանիկի փողոց 49 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ստեփան Մելսակի իսկոյանի /ծնված 01.01.1959թ-ին/, Մանուշ Արամայիսի Գասպարյանի /ծնված 01.01.1962թ-ին/, Արև Ստեփանի իսկոյանի /ծնված 20.01.1983թ-ին/, Նաթելլա Ստեփանի իսկոյանի /ծնված 04.08.1986թ-ին/, Անի Ստեփանի իսկոյանի /ծնված 24.11.1987թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.10998 հա մակերեսով հողամասի և օրինական կառուցված 265.7 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1991թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. 2002-2020թթ-ին ինքնակամ կառուցված 3.0 քմ արտաքին /2.3 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 874 /ուր հարյուր յոթանասունչորս/ ՀՀ դրամ, ընդամենը $3.0 \times 874 = 2700$ /երկու հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ; 91.7 քմ արտաքին /71.1 քմ ներքին/ մակերեսով անասնաշենքը և 21.6 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 524.4 /հինգ հարյուր քսանչորս ամբողջ չորս տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը $113.3 \times 524.4 = 59500$ /հիսունինը հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:
3. 2022թ. ինքնակամ կառուցված 51.2 քմ մակերեսով ծածկը ճանաչել որպես ինքնակամ շինություն:
4. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, գյուղ Շովազարդ, Չորավար Անդրանիկի փողոց, 9-րդ փակուղի, 2 հասցեն:
5. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժի կորցրած:
6. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:
7. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
8. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1018-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ, ՍԱՐՈՒԽԱՆ ՉՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՆՐԲԱՆՔԸ 2
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ՝ ՍԱՐԳԻՍ ԱՐՏՈՒՇԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ՄԵՐՈՒ ՍԱՐԳՍԻ
ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ՋՈՒԼԻԵՏԱ ԼԵՈՆԻԴԻ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ, ՄԵՍՐՈՊ ՍԱՐԳՍԻ
ԱՍԼԱՆՅԱՆԻՆ, ՀԵՐՄԻՆԵ ՍԱՐԳՍԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ
ԱՌԱՋԱՑԱԾ ՆՈՐ ՄԻԱԿՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը և Գավառ համայնք, Գ. Սարուխան Չորավար Անդրանիկի Նրբանք 2 հասցեի համասեփականատեր՝ Մեսրոպ Սարգսի Ասլանյանի /ծնված 07.04.1986թ./, Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**


1. Գավառ համայնք գ. Սարուխան 05-078-0198-0029 կադաստրային ծածկագրի՝ Մեսրոպ Սարգսի Ասլանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 27042021-05-0030/ գույքի բաժանումից առաջացած 0.0656 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Սարուխան շորավար Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք 3 բնակելի տուն հասցեն:

2. Գավառ համայնք գ. Սարուխան 05-078-0198-0029 կադաստրային ծածկագրի՝ Մեսրոպ Սարգսի Ասլանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 27042021-05-0030/ գույքի բաժանումից առաջացած 0.05820 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Սարուխան շորավար Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք 5 բնակելի տուն հասցեն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2026թ. հուլիսի 22
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1019-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ, ՍԱՐՈՒԽԱՆ Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ 1/1 ԲՆԱԿԵԼԻ
ՏՈՒՆ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏԵՎՈՂ՝ ՍԵՐՈՔ ՍԱՐԳՍԻ ԱՍԼԱՆՅԱՆԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ
ԱՌԱՋԱՅԱԾ ՆՈՐ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**


Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասերի հատակագծերը և Գավառ համայնք, գ. Սարուխան Վ. Գասպարյան փողոց 1/1 բնակելի տուն հասցեի սեփականատեր՝ Սերոբ Սարգսի Ասլանյանի /ծնված 23.12.1984թ./, Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և հաշվի առնելով, որ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Գավառ համայնք գ. Սարուխան 05-078-0199-0009 կադաստրային ծածկագրի՝ Սերոբ Սարգսի Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 05052021-05-0019/ գույքի բաժանումից առաջացած 0.01639 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Սարուխան Չորավար Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք 2 ավտոտնակ հասցեն:

2. Գավառ համայնք գ. Սարուխան 05-078-0199-0009 կադաստրային ծածկագրի՝ Սերոբ Սարգսի Ասլանյանին սեփականության իրավունքով պատկանող /վկայական N 05052021-05-0019/ գույքի բաժանումից առաջացած 0.01226 հա մակերեսով նոր միավոր անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, Սարուխան 2որավար Անդրանիկի փողոց 1-ին նրբանցք 4 բնակելի տուն հասցեն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2026թ. հուլիսի 22
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1020-Ա

**ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ ՆԱԻՐԱ ԱՐՄԵՆԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԵՎ ԵՎԱ ԱՐՄԵՆԻ
ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՄՈՐ ՀԵՏ
ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 2/ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24/ կետի, ՀՀ ընտանեկան օրենսգրքի 43-րդ և 53-րդ հոդվածների, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 9-րդ կետի 2-րդ ենթակետի «ը» պարբերության, 17-րդ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 15.07.2026թ. նիստի արձանագրությունը, ելնելով անչափահասների երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության ապահովման անհրաժեշտությունից, **որոշում եմ**

1. Անչափահասներ Նաիրա Արմենի Հունանյանի (ծնված՝ 24.09.2020թ., ծննդյան վկայական՝ ԲԱ 297860) և Եվա Արմենի Հունանյանի (ծնված՝ 21.06.2025թ., ծննդյան վկայական՝ ԲԲ 009057) բնակության վայր սահմանել նրանց հոր՝ Արմեն Աշոտի Հունանյանի (անձնագիր՝ AS 0495333, տրված՝ 31.01.2019թ. 040-ից) բնակության վայրը՝ Գավառ համայնքի Գանձակ գյուղի Սայաթ Նովա 5-րդ փակուղի թիվ 3 հասցեի բնակելի տունը:
2. Մինչև դատական ակտի ընդունումը անչափահաս երեխաների և նրանց մոր՝ Նելլի Համլետի Հովհաննիսյանի (անձնագիր՝ AS 0475100, տրված՝ 24.01.2019թ. 040-ից) համար տեսակցության կարգ սահմանել շաբաթական երեք օր՝ երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերին, յուրաքանչյուր անգամ երեք ժամ տևողությամբ՝ ծնողների փոխադարձ համաձայնությամբ ձեռք բերված կարգով և վայրում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1021-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱՐԾՎԱՔԱՐ ԹԱՂԱՄԱՍԻ Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՓՈՂՈՑ ԹԻՎ 40/1 ՊԱՀԵՍՏ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՊԱՀԵՍՏԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 25.05.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026GTСMՈQ ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Արամայիս Բադալի Գրիգորյանի դիմումը՝ Գավառ քաղաք Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց թիվ 40/1 պահեստ հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 65.70 քմ. արտաքին /59.10 քմ. ներքին/ մակերեսով պահեստը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես

նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, **որոշում եմ**

1. Գավառ քաղաք Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց թիվ 40/1 պահեստ հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.20885 հա մակերեսով արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 65.70 քմ. արտաքին /59.10 քմ. ներքին/ մակերեսով պահեստը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:
2. Գավառ քաղաք Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց թիվ 40/1 պահեստ հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.20885 հա մակերեսով արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 65.70 քմ. արտաքին /59.10 քմ. ներքին/ մակերեսով պահեստը ճանաչել օրինական:
3. Հողամասի գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողատեսքից փոխել պահեստարանների հողատեսքի:
4. Օրինական ճանաչված պահեստին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Արծվաքար թաղամասի Գ. Միքայելյան փողոց թիվ 40/1 պահեստ հասցեն:
5. Օրինականացված 65.70 քմ. արտաքին /59.10 քմ. ներքին/ մակերեսով պահեստը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Արամայիս Բադալի Գրիգորյանին:
6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. հուլիսի 22
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հուլիսի 2026 թվականի N 1022-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
